

ՍՈՒՐԲ ԳՐԱԿԱՆ**ՏԵԼԻՉԵԱՆ ԽՆԴԻՐԸ****Գ.****Ս. ԳԻՐՔ ԵՒ ԲԱԲԵԼՈՆ**

Կը յիշէք անշուշտ Ս. Գրքի այն հատուածը, որուն մէջ կը պատմուի թէ ինչպէս Սաւուղ չէր ուզեր թողուլ, որ երիտասարդ Դաւիթ Գողիաթի դէմ պատերազմի ելլէ: Դաւիթ կը յիշեցնէր Սաւուղի թէ ինք իբր ոչխարներու հովիւ քանիցս առիւծի եւ արջի դէմ կռուած է, յետ խելով անոնց յափշտակած աւարը, եւ երբ անոնք իր դէմ դարձած են, այն ատեն մօրութէն բռնելով սպաննած է առիւծը: Անհաւատալի պոռոտախօսութիւն մը կը թուի ասիկա մեզ համար, բայց ասոր համար իրողութիւն ըլլալէ չդադրիր ան: Ահա տեսէք ասորական գեղեցիկ քանդակապատկեր մը, որուն վրայ փորագրուած է Սարգանաբաղի պատկերը, որ ձախ ձեռքով իր ետեւի ոտքերուն վրայ կանգնած առիւծը մօրութէն բռնած է եւ աջով իր դաշոյնը անոր կուրծքը խոթած: Սարգանաբաղի ետեւը կայնած են իր երկու զինակիրները: Թողունք ալ կառքով ու ձիով եղած առիւծի որսերը:

Եսայի իր Գիրքին ԽԵ. 20-ին մէջ կ'ըսէ. «Ժողովուեցէ՛ք ու եկէ՛ք ... անոնք զիտակցութիւն չունին, որ իրենց կուռքերուն փայտը կը տանին (կը շրջեցնեն) եւ փրկելու կարողութիւն չունեցող աստուծոյ աղօթք կ'ընեն» եւ ԽԶ. 1-ին մէջ. «Բէլ խոնարհեցաւ, Նաբաւ ծռեցաւ, անոնց կուռքերը կենդանիներու եւ անասուններու բաժին եղան: Ձեր շրջեցուցածները բռնուած են խոնջած անասունին վրայ»: Եսայիի այս խօսքերը առաջ չէին հասկցուէր բնաւ. այժմ տարակոյս իսկ չկայ անոնց նշանակութեան մասին: Ահաւասիկ ձեզի ասորական քանդակապատկեր մը, որ կը ներկայացնէ թէ ինչպէս տեղի կ'ունենար «աստուածներու թափօրը»: Զինուորները իրենց պաշտօնական զգեստով եւ սրածայր գլխարկներով երկ-երկու իրար ետեւէ շարուած չորս հոգի մէկ աստուծոյ արձանը կը փոխադրեն: Թափօրի մէջ ամենէն առաջ կը տարուին աստուածուհեաց արձանները, ասոնց կը հետեւի որոտման աստուածը՝ զինուած մուրճով եւ կայծակներու խուրձով մը:

Բաբելոնեան պեղումները մեր աչքերուն առջեւ կը բանան Քրիստոսէ 4000 տարի առաջ եղած մարդկային քաղաքակրթութիւնն ու արուեստը: Հնութեան խաւարը փարատելով մենք կը թափանցենք նախնական ժամանակներուն խորքը եւ հոն կը ծանօթանանք Սումմերացւոց հետ, որոնք ո՛չ հնդեւրոպական եւ ո՛չ ալ սեմական ծագում ունէին, եւ որոնք Բաբելոնեան քաղաքակրթութեան հիմնադիրն ու ստեղծագործողը եղան: Այն Սումմերացւոց, որոնց համար 60 թիւը 1-էն ետքը ամենէն մեծ միութիւնն է, ինչպէս մեզ համար 100-ը, եւ մենք անոնցմէ ժառանգած ենք ընդհանրապէս 60 երկվայրկեան եւ ժամերու 60 ընդհանրապէս:

Բաբելացիք եւ Ասորեստանցիք լուսաւորները դիտելով 480 տարուան ժամանակաշրջան մը շինած էին. Ռոպէրթսըն Սմիթ եւ Վելհաուզէն ցուցուցին որ նոյն հաշիւը կը գործածէին նաեւ իսրայէլացիք. ահա թէ ի՞նչ կ'ըսուի Գ. Թագ. Զ. 1-ին մէջ. «Եւ Իսրայէլի որդւոց Եգիպտոսի երկրէն ելլելու 480-րդ տարին...»: Այս նկատի առնելով կը հաշուէին անոնք գերութենէն մինչեւ Սողոմոնի տաճարի հիմնուիլը 480 տարի եւ ասկէ մինչեւ իսրայէլացւոց ելքը 480 տարի: Ո՛րքան ընդհանուր սովորութիւններ ու արտայայտութիւններ ունին այս երկու սեմական ժողովուրդները, որոնցմէ Բաբելոնի

լեզուն հին ատեն խիստ տարածուած եւ դիւրահասկնալի է եղած Պաղեստինի մէջ: Ո՛րքան անհրաժեշտ է ուրեմն այս լեզուն Ս. Գիրքը աղէկ ըմբռնելու համար: Գիտէ՞ք թէ Ս. Գիրքի մէջ խիստ յաճախ գործածուած է «Տէրը օրհնէ քեզ եւ պահէ քեզ» բառերը, բայց անոր իսկական նշանակութիւնը Ասորա-բաբելական գիւտերէն ետքը հասկնալի եղաւ: «Իր դէմքը կամ աչքերը մէկուն բարձրացնել» կը նշանակէ ենթակային սէր կամ համակրութիւն արտայայտել:

Բաբելոն՝ որ հագիւ Իտալիոյ մեծութիւնն ունէր, Քրիստոսէ 2250 տարի առաջ իրաւական տեսակէտէն զարգացած էր, այնպիսի քաղաքակրթութեամբ մը մօտաւորապէս որպիսին ունէր Եւրոպա Միջին դարու վերջին շրջանին: Համուրապի կրցաւ Բաբելացւոց թշնամի Եղամացիները իր երկրէն քշել եւ Բաբելոնը մեծ պետութեան մը մայրաքաղաք դարձնել: Անիկա ժողովեց բոլոր հին օրէնքները եւ գրեթէ լիակատար ժողովածու մը կազմեց քաղաքացիական իրաւունքներու: Այս օրէնքները գտան Ֆրանսացի հնագէտներ՝ տը Մօրկան եւ Շայլ 1901-2-ին: Ասոնց մասին ետքն ալ պիտի խօսինք: Ամբողջ աշխարհի մէջ ոչ մէկ քաղաք կրցած է, մօտաւորապէս 2000 տարի շարունակ, ամբողջ ծանօթ աշխարհի համար քաղաքակրթութեան կեդրոն դառնալ՝ ինչպէս Բաբելոն. «Բաբելոն Տիրոջ ձեռքին մէջ բոլոր երկիրը գինովցնող գաւաթ մը եղաւ» կ'ըսէ Երեմիա (Գլ. ԾԱ. 7) եւ մինչեւ Յովհաննու Յայտնութիւնը անիկա վաճառականութեան, արուեստից, ճարտարագործութեան, գիտութեան, գրականութեան եւ մա՛նաւանդ փափուկ, զեղիւ ու անառակ կեանքի գաղափարական մարմնացումը դարձաւ:

1887-ի ձմեռը, Եգիպտոսի Ֆելլահները Թեբէի եւ Մեմփիսի մէջ գտնուող էլ-Ամառնա կոչուած աւերակները պեղեցին եւ Ամենոփիս Դ.-ի ապարանքին մէջ գտան 300 կճեայ տախտակներ այլ եւ այլ ձեւերով: Ասոնք կը պարունակէին Բաբելոնի, Ասորեստանի, Միջագետքի իշխաններու, Եգիպտոսի Փարաւոններէն՝ Ամենոփիս Դ.-ին եւ Դ.-ին գրուած նամակները: Բացի ասոնցմէ մա՛նաւանդ Տիւրոսի, Սիդոնի, Ասկաղոնի, Ակկոյի Եգիպտական կառավարիչներու գրութիւնները: Պերլինի թանգարանը ունի անստգիւտ գանձ մը, այսինքն Իսրայէլացիներու Պաղեստին գաղթելէն առաջ գրուած նամակ մը (Երուսաղէմէն հարկաւ) կճաքարի (Tontafel) վրայ գրուած: Էլ-Ամառնայի այս գիւտը յանկարծակի, պայծառ լոյս մը սփռեց 1500-1400 տարի Քրիստոսէ առաջ տիրող քաղաքակրթական եւ քաղաքական կեանքին վրայ ինդոսէն մինչեւ Նեղոս: Այն իրողութիւնը, որ այս բոլոր կճաքարերը ո՛չ թէ եգիպտերէն այլ բաբելոներէն գրուած էին, կը ցուցնէ թէ ո՛րքան մեծ էր Բաբելոնի քաղաքակրթական եւ գրական ազդեցութիւնը եւ թէ ան 2200-1400 Յփրատի ափերէն մինչեւ Լիպիոյ անապատները բացարձակապէս կը տիրէր քաղաքակրթական տեսակէտով:

Ուրեմն երբ Իսրայէլի Երկոտասան ցեղերը Քանան մտան, անիկա արդէն կատարելապէս բաբելոնեան քաղաքակրթութեան ազդեցութեան տակ էր: Քանանացիք, ինչպէս զիրենք շրջապատող բոլոր ազգերը, Քրիստոսէ 1450 տարի առաջ կը գրէին բաբելոնեան սեպագրերով: Աս կ'ապացուցանէ այն ատենուան գրականութիւնը եւ այս իրողութիւնը կ'ենթադրէ ինքնըստինքեան Բաբելոնի մտաւորական կեանքի դարաւոր ազդեցութիւնը: Փրոֆ. Սելին վերջին տարիներս Պաղեստինի մէջ իր ըրած պեղումներու ընթացքին Քանանացւոց քաղաքի մը մէջ սեղան մը գտաւ բաբելոնեան ոգիներով եւ կեանքի ծառերով, անիկա ի յայտ բերաւ նաեւ բաբելոներէն կնիքներ: Քանանացւոց կրօնն ալ Բաբելոնի անուրանալի ազդեցութիւնը կը կրէ եւ Իսրայէլացւոց գաղթելէն առաջ Երուսաղէմի քով գտնուող գիւղ մը բաբելացւոց աստուած Նինիպի անուամբ Պիդ-Նինիպ կը կոչուէր: Փրոֆ. Սելին գտած է նաեւ բաբելոներէն լեզուով գրուած քանանացւոց երկու նամակներ: Ասկէ կը հետեւի թէ Իսրայէլացւոց գաղթելէն առաջ Բաբելոնի ազդեցութիւնը շատ մեծ էր Քանանի վրայ:

Այս ազդեցութեան աղօտ վկայութիւնը ունինք նաեւ Ս. Գիրքին մէջ: Հոս կը պատմուի, որ Քանանացւոց Երիքով քաղաքը գրաւելու ատեն, Աքար՝ աւարին մէջ աղուոր բանուած վերարկու մը կը տեսնէ, որ Բաբելոնի արտադրութիւն էր եւ բաբելոնեան դրամներ կը տեսնէ եւ զանոնք կը գողնայ:

Այսպէս Աքար ինք կը պատմէ Յեսուին (Գիրք Յեսուայ, է. 21): Սակայն ո՛չ միայն վաճառականութիւնն ու դրամը, այլ եւ բաբելոնեան արուեստը, իրաւունքը, սովորութիւնները տիրապետող էին Պաղեստինի մէջ: Այնպէս որ հոն բնակող ժողովուրդները նոյն իսկ անոնց արտայայտութեան արտաքին ձեւերը իւրացուցին: Բնական էր, որ Իսրայէլացիներն ալ ենթարկուէին այս ազդեցութեան, թէ՛ կրօնական եւ թէ՛ այլ տեսակէտներով: Իսրայէլական շաբաթի ծագման մասին գիտական տեսութիւն մը տուած եմ «Լոյս»-ի մէջ (տե՛ս 1905, Թիւ 23-24): Ըստ Տասնաբանեայ օրինաց «շաբաթ» կը կոչուի իսկապէս ո՛չ թէ եօթնօրեակը՝ այլ հանգստեան օրը: Այսպէս, Մովսէս Ելից Ի. 9-10-11-ին մէջ կ'ըսէ. «Վեց օր պիտի աշխատիս եւ բոլոր գործերդ կատարես, իսկ եօթներորդ օրը Տիրոջդ հանգստեան օրն է. այն օրը չպիտի աշխատիս ո՛չ դուն, ո՛չ քու աղջիկդ, ո՛չ քու ծառադ ... որովհետեւ ... Տէրը եօթներորդ օրը հանգստացաւ ... եւ օրհնեց հանգստեան օրը ու սրբեց զանիկա»: Բ. Օրինաց. Ե. 13-15-ին մէջ ալ կը յայտարարուի. «Վեց օր պիտի աշխատիս եւ բոլոր գործերդ կատարես, իսկ եօթներորդ օրը Տիրոջդ, քո Աստուծոյդ հանգստեան օրն է»:

Նոյն սովորութիւնը կը տեսնենք նաեւ Բաբելացւոց քով: Շաբաթը, որ բաբելոններէն «Շաբադդու» կ'անուանուի, ո՛չ թէ եօթնօրեայ շրջան մը այլ բացարձակապէս որոշեալ օր մը կը նշանակէ, որ աստուածներու եւ մարդկանց հաշտութեան օրն ըլլալուն համար պէտք է տօնուի, այսինքն այդ օրը բաբելացիք պիտի չաշխատէին: Ամսուան 7-րդ, 14-րդ 21-րդ եւ 28-րդ օրերը միա ուտել, զոհել, զգեստ փոխել, կառք նստիլ, դատաւորութիւն ընել, գուշակել, բժշկել եւ առհասարակ որ եւ է առեւտրական ձեռնարկ արգիւրուած էր: Բաբելոնեան շաբաթը = շաբադդուն աստուածներու սրտի հանգստեան եւ մարդկային աշխատութեան դադարի օրն էր:

Պարզ է թէ ո՛րքան նմանութիւն ունի եբրայական շաբաթը բաբելական շաբաթին հետ: Քէօնիկ անուն ծանօթ գիտնականը կը կարծէ, որ իսրայէլական շաբաթը ծագած է «ծառաներու եւ անասուններու դէմ մարդասիրութիւն ցուցնելու համար»: Ասիկա ճիշդ չէ սակայն: Բաբելացւոց քով 7 թիւը չար, գէշ կը նկատուէր: Թալմուտի մէջ կը պատմուի, որ Մովսէս իր ազգակիցներուն համար հանգստեան օր մը խնդրեր է Փարաւոնէն եւ երբ վերջինս հարցուցեր է ո՞րը, Մովսէս պատասխաներ է. «Սաղուրնոս մոլորակին նուիրուածը՝ այսինքն եօթներորդը, այս օրերու աշխատանքները արդէն չեն յաջողիր»: Պերլինի քով գտնուող Թրեպոպոլ աստղաբաշխական դիտարանի վարիչ՝ Արխենհօլտ հետեւեալ կարծիքը կը յայտնէ այս խնդրի մասին. «Սաղուրնոսի մէկ գիշերուան մէջ ըրած շարժումը անգէն աչքերու համար չէր կրնար տեսանելի ըլլալ: Քաղդէացի քահանաները, որոնք հեռագիտական շուկաներ, չէին կրնար աղեղնավայրկեանի մը շարժումը նշմարել: Սաղուրնոս միակ լուսաւորն էր, որ առեւելոյթս կը հանգչէր: Այս դիտողութիւնը պատճառ եղած է գուցէ հանգստեան օր մը ներմուծելու: Բնականաբար այդ օրը պիտի ըլլար մոլորակիս նուիրուած օրը, որ ցոյց չէր տար: Միւս բոլոր մոլորակներու շարժումները կրնային քահանաները առանց հեռագիտակի տեսնել»: